«ԱՐԱՐԱՏ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ
«ՀՐԱԶԴԱՆ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍՏԱԴԻՈՆ

№ 16(317)

# 1990



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ

ВЫСШАЯ ЛИГА

ԽՍՀՄ 53-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1 СЕНТЯБРЯ
ՇԱԲԱԹ СУББОТА

## «ԱՐԱՐԱՏ» — «ԲԿՄԱ»
(ԵՐԵՎԱՆ) (ՄՈՍԿՎԱ)

## «АРАРАТ» — «ЦСКА»
(ЕРЕВАН) (МОСКВА)

ԽԱՂԻ ՍԿԻԶԲԸ՝ ԺԱՄԸ 19-ԻՆ
НАЧАЛО ИГРЫ В 19 ЧАСОВ

## ЦСКА

**Команда основана в 1923 г. (ОППВ). В 1928—1950 гг.—ЦДКА, 1951—1956—ЦДСА, 1957—1959 гг.—ЦСК МО. В высшей лиге с 1936 г. (кроме 1952—1953, 1985—1986, 1988—1989 гг.). В 47 чемпионатах в 1290 матчах +565=355—370, мячи 1960—1407. Шестикратный чемпион СССР, четырехкратный обладатель Кубка СССР.**

**Наибольшее число встреч за клуб в чемпионатах СССР провел В. Федотов—381. Лучший бомбардир клуба в чемпионатах—Г. Федотов—124 мяча. Рекордсмен клуба за сезон—В. Бобров—24 мяча (1945 г.).**

После двухгодичного перерыва возвратившись в высшую лигу, ЦСКА предстал перед болельщиками совсем новой командой, у которой есть свой почерк игры. В этом большая заслуга главного тренера армейцев П. Садырина, который принял команду в прошлом году и сумел вывести ЦСКА в высшую лигу.

Армейцы сейчас выступают просто отлично. Команда располагает хорошими игроками, исповедует комбинационный, остроатакующий стиль игры, отличается высокой результативностью. И нет ничего удивительного, что ЦСКА является одним из главных претендентов на чемпионское звание. Своей игрой команда достойна этого звания.

---

### ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*Այն կարելի է բաժանել երկու փուլի: Առաջինն ընդգրկում է 1949—1969 թթ.: Այդ ընթացքում կայացած 18 խաղից 13-ն ավարտվել էր ԲԿՄԱ-ի հաղթանակով, 5 խաղում էլ գրանցվել էր ոչ ոքի: Երկրորդ փուլն ընդգրկում է 1970—1987 թթ., երբ արդեն «Արարատն» էր դարձել ահեղ մրցակից ԲԿՄԱ-ի համար (21 հաղթանակ, 4 պարտություն): Արարատցիների հաղթարշավը սկսվեց 1970 թ., երբ առաջին անգամ, այն էլ Մոսկվայում, «Արարատը» հաղթեց ԲԿՄԱ-ին: 1971—1975 թթ. մեր ֆուտբոլիստները հաղթանակով ավարտեցին բանակայինների հետ անցկացրած բոլոր տասը մրցախաղերը, ընդ որում առաջին վեց խաղում մեր թիմի դարպասը մնացել է անառիկ:*

*Այս մրցաշրջանի առաջին շրջանի խաղում «Արարատը» Մոսկվայում հաղթանակի հասավ շնորհիվ Վ. Ազատյանի խփած միակ գոլի:*

*Այսօրվա դրությամբ ուժերի փոխհարաբերությունն այսպիսին է.*

*Ընդամենը՝* 51 *խաղ,* +22=12—17, 56—63

*Երևանում՝* 26 *խաղ,* +12=6—8, 35—35

*Մոսկվայում՝* 25 *խաղ,* +10=6—9, 21—28

*Լավագույն ռմբարկուներն են Խ. Հովհաննիսյանը (7 գոլ) և Վ. Ֆեդոտովը (8):*

---

** Արարատցիները ամենաշատ թվով հաղթանակներ տոնել են «Շախտյորի» (13), ԲԿՄԱ-ի (12), «Զենիթի» և «Տորպեդոյի» (11-ական) նկատմամբ:*

** «Հրազդանում» «Արարատի» դարպասը խփված առաջին գոլի հեղինակ է դարձել Ֆ. Աբրահամյանը, որը «Զարյայի» հետ խաղում գնդակն ուղարկել է սեփական դարպասը: Հետաքրքիր է, որ երկրորդ գոլի հեղինակն էլ արարատցի է, սակայն նախկին (Դ. Գալիս): Մրցակից թիմերի ֆուտբոլիստներից «Հրազդանում» բոլորից արդյունավետ են գործել Օ. Պրոտասովը՝ 6 գոլ, Օ. Բլոխինը և Յու. Գավրիլովը՝ 5-ական, Յու. Չեսնոկովն ու Վ. Կոլոտովը՝ 4-ական:*

# 300-ՐԴ ԽԱՂԸ «ՀՐԱԶԴԱՆՈՒՄ»

Այսօրվա խաղը «Հրազդան» ստադիոնում, երկրի առաջնության շրջանակներում «Արարատի» թվով 300-րդ հանդիպումն է։ Արդեն 20-րդ մրցաշրջանն է, ինչ «Հրազդանը» դարձել է «Արարատի» գլխավոր մրցաբեմը։ Այստեղ ֆուտբոլասերներն ականատես են եղել թիմի մի շարք տպավորիչ հաղթանակներին, 1973 թ. մեծարել երկրի նորընծա չեմպիոն ու գավաթակիր «Արարատի» ֆուտբոլիստներին։ «Հրազդանում» հանդես են եկել մեր երկրի բոլոր հավաքական թիմերը, ինչպես նաև աշխարհի մի շարք երկրների ուժեղագույն ակումբները։

Ցավոք, վերջին տարիներին գնալով նվազում է «Հրազդան» ստադիոն հաճախող մարզասերների թիվը։ Միգուցե այսօր, այս հոբելյանական խաղին մեր ֆուտբոլասերներն իրենց ներկայությամբ այնպիսի մթնոլորտ կստեղծեն, որը տիրում էր «Հրազդանում» ոչ հեռավոր անցյալում։

Իսկ այժմ ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում վիճակագրական տվյալներ «Հրազդան» ստադիոնում արարատցիների ունեցած ելույթների վերաբերյալ։

| Թվականը | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ | Ռմբարկուները |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1971 | 10 | 8 | 1 | 1 | 17—7 | 17 | Էդ. Մարգարով—8 |
| 1972 | 15 | 7 | 4 | 4 | 27—15 | 18 | Հ. Զանազանյան–10 |
| 1973 | 15 | 11 | 3 | 1 | 35—12 | 25 | Ա. Անդրեասյան—11 |
| 1974 | 15 | 9 | 5 | 1 | 29—13 | 23 | Ն. Ղազարյան—7 |
| 1975 | 15 | 12 | 1 | 2 | 30—14 | 25 | Էդ. Մարգարով—9 |
| 1976 | 15 | 7 | 5 | 3 | 22—12 | 19 | Ա. Անդրեասյան—5 |
| 1977 | 15 | 6 | 6 | 3 | 18—13 | 18 | Խ. Հովհաննիսյան—7 |
| 1978 | 15 | 6 | 5 | 4 | 14—15 | 17 | Ա. Անդրեասյան, Ա. Սահակյան–3 |
| 1979 | 17 | 8 | 9 | 0 | 27—11 | 25 | Խ. Հովհաննիսյան–11 |
| 1980 | 17 | 10 | 6 | 1 | 22—11 | 26 | Անդ. Խաչատրյան—6 |
| 1981 | 17 | 9 | 4 | 4 | 35—22 | 22 | Խ. Հովհաննիսյան–12 |
| 1982 | 17 | 9 | 6 | 2 | 37—21 | 24 | Խ. Հովհաննիսյան—11 |
| 1983 | 17 | 9 | 4 | 4 | 19—12 | 22 | Խ. Հովհաննիսյան—7 |
| 1984 | 17 | 10 | 3 | 4 | 32—18 | 23 | Հ. Մխիթարյան—16 |
| 1985 | 16 | 9 | 5 | 2 | 29—17 | 23 | Հ. Մխիթարյան, Ռաֆ. Գալստյան—8 |
| 1986 | 15 | 6 | 6 | 3 | 16—13 | 18 | Պ. Գալստյան, Ռաֆ. Գալստյան—3 |
| 1987 | 15 | 12 | 1 | 2 | 27—14 | 25 | Աշ. Խաչատրյան-6 |
| 1988 | 14 | 7 | 4 | 3 | 12—7 | 18 | Աշ. Խաչատրյան—5 |
| 1989 | 15 | 6 | 6 | 3 | 14—10 | 18 | Բ. Մելիքյան—5 |
| 1990 | 7 | 3 | 2 | 2 | 10—6 | 8 | Ս. Հովհաննիսյան—3 |
| | 299 | 154 | 86 | 49 | 473—263 | | |

---

* Առաջին խաղը «Հրազդանում» «Արարատն» անցկացրել է 1971 թ. մայիսի 19-ին, «Կայրաթի» հետ և հաղթել է 3:0 հաշվով։ Անդրանիկ գոլի հեղինակ է դարձել Ա. Կովալենկոն։ Այդ խաղում էլ Հ. Զանազանյանն իրացրել է առաջին 11 մ հարվածը։

* Թիմի խփած 473 գոլերի հեղինակներ են դարձել 18 արարատցիներ, ինչպես նաև Գ. Ջոխաձեն («Դինամո» Թ.) և Ա. Սոպկոն («Շախտյոր»)։ Առաջնության հանդիպումներում «Հրազդանում» բոլորից դիպուկ է գտնվել Խ. Հովհաննիսյանը՝ 63 գնդակ։ Այնուհետև գալիս են Ա. Անդրեասյանը՝ 41, Հ. Մխիթարյանը՝ 33, Էդ. Մարգարովը՝ 30, Բ. Մելիքյանը՝ 25, Անդ. Խաչատրյանը՝ 23, Ն. Ղազարյանը՝ 20, Հ. Զանազանյանը՝ 19, Լ. Իշտոյանը՝ 16 և Աշ. Խաչատրյանը՝ 15։

* «Հրազդանում» բոլորից շատ՝ 21 անգամ հանդես է եկել «Տորպեդոն», իսկ բոլորից հաջող՝ Կիևի «Դինամոն», որը տարել է 7 հաղթանակ։ 6-ական հաղթանակ են տոնել «Սպարտակը» և «Դնեպրը»։ Առաջին պարտությունը «Հրազդանում» «Արարատը» կրել է Թբիլիսիի «Դինամոյից» (0:1) 1971 թ. սեպտեմբերի 14-ին։

Мн-1500

## ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ — СОСТАВЫ КОМАНД

### ԲԿՄԱ — ЦСКА

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ալեքսանդր Գուտեև | 1967 | 3 | — | Александр Гутеев |
| ավ Դմիտրի Կուզնեցով | 1965 | 63 | 4 | мс Дмитрий Кузнецов |
| ավ Սերգեյ Կոլոտովկին | 1965 | 41 | — | мс Сергей Колотовкин |
| ավ Դմիտրի Բիստրով | 1967 | 28 | — | мс Дмитрий Быстров |
| ավվ Սերգեյ Ֆոկին | 1961 | 67 | 3 | змс Сергей Фокин |
| ավ Միխայիլ Կոլեսնիկով | 1966 | 48 | 3 | мс Михаил Колесников |
| ավ Իգոր Կոռնեև | 1967 | 35 | 7 | мс Игорь Корнеев |
| ավ Վալերի Բրոշին | 1962 | 146 | 17 | мс Валерий Брошин |
| ավ Օլեգ Սերգեև | 1968 | 16 | 5 | мс Олег Сергеев |
| ավվ Վլադիմիր Տատարչուկ | 1966 | 42 | 8 | змс Владимир Татарчук |
| ավ Սերգեյ Դմիտրիև | 1964 | 146 | 41 | мс Сергей Дмитриев |
| ավ Օլեգ Մալյուկով | 1965 | 27 | — | мс Олег Малюков |
| ավ Սերգեյ Կրուտով | 1969 | 2 | — | мс Сергей Крутов |
| ավ Վալերի Մասալիտին | 1966 | 28 | 5 | мс Валерий Масалитин |
| ավ Վիկտոր Յանուշևսկի | 1960 | 247 | 3 | мс Виктор Янушевский |
| ավ Միխայիլ Երյոմին | 1968 | 9 | — | мс Михаил Еремин |

Թիմի գլխավոր մարզիչ՝
ավ, ՌՍՖՍՀ վաստ. մարզիչ
Պ. Ֆ. Սադիրին

**Главный тренер команды—**
**мс, зтр РСФСР**
**П. Ф. Садырин**

### «ԱՐԱՐԱՏ» — „АРАРАТ"

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ալ-դր Պոդշիվալով | 1964 | 162 | — | Александр Подшивалов |
| Երվանդ Սուքիասյան | 1967 | 46 | 2 | Ервaнд Сукиасян |
| Վարդան Խաչատրյան | 1968 | 65 | — | Вардан Хачатрян |
| մկավ Աշոտ Խաչատրյան | 1959 | 337 | 20 | мсмк Ашот Хачатрян |
| Սարգիս Հովհաննիսյան | 1968 | 56 | 5 | Саркис Оганесян |
| Ալբերտ Սարգսյան | 1963 | 160 | 12 | Альберт Саркисян |
| Գուրգեն Ենգիբարյան | 1964 | 82 | 1 | Гурген Енгибарян |
| ավ Բաբկեն Մելիքյան | 1960 | 280 | 41 | мс Бабкен Меликян |
| Վիտալի Աղասյան | 1962 | 58 | 4 | Виталий Агасян |
| Արտակ Կարապետյան | 1966 | 63 | 4 | Артак Карапетян |
| Կարեն Մարկոսյան | 1968 | 59 | 3 | Карен Маркосян |
| Էրաստ Օսիպյան | 1965 | 75 | 6 | Эраст Осипян |
| Արմեն Հակոբյան | 1970 | 11 | 1 | Армен Акопян |
| Սերգեյ Հակոբյան | 1964 | 16 | — | Сергей Акопян |
| Գևորգ Քամալյան | 1965 | 40 | — | Геворк Камалян |
| Արմեն Ավագյան | 1962 | — | — | Армен Авакян |

Թիմի գլխավոր մարզիչ՝
մկավ Ա. Վ. Սարգսյան

**Главный тренер команды—**
**мсмк А. В. Саркисян**

---

Игру судит судья всесоюзной категории **В. Медведцкий** (Волжский). Судьи на линии—судья всесоюзной категории **М. Гущев** (Куйбышев) и судья республиканской категории **В. Ярыгин** (Волгоград).

---

Издание пресс—центра ФК „Арарат"
Составитель **А. Айрапетян.**

Цена 20 коп.

З. 184 Т. 1000

Եր. 4SS, պ. 2120, տպ. 1000

ООП фирмы „Юнисервис" Ереван—12, ул. Комитаса 27/1